ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14.10.2019թ.
ժամը 11 [30]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀՎ ՏԱ բաժնի ավագ սպա, մայոր Թ. Ջամղարայան,
- ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյանը նիստից բացակայում է,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ ՀՕՊ, ՌԷՊ կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան:

Գնումները համակարգող՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, իսկ **«Օազիս կոմպյուտեր», «Մեգա Էներգո», «Հաշ Էմ Սերվիս» և «Այ Թի Թրեյնինգ» ՍՊԸ**-ների կողմից տեխնիկական բնութագրերը ներկայացված են թերի, մասնավորապես՝

- **«Օազիս կոմպյուտեր», «Հաշ Էմ Սերվիս» և Այ Թի Թրեյնինգ» ՍՊԸ**-ների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով սահմանված ապրանքների արտադրման տարեթվերի մասին տեղեկությունը:
- **«Մեգա Էներգո» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված Հավելված 3.1-ում ընթացակարգի ծածկագիրը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16 փոխարեն գրված է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/15:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ երեք աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

18.10.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Սահմանված ժամկետում **«Մեգա Էներգո», «Հաշ Էմ Սերվիս» և Այ Թի Թրեյնինգ» ՍՊԸ**-ների կողմից ներկայացվեցին անհամապատասխանությունների շտկումները, որոնք ընդունվեցին գնահատող հանձնաժողովի կողմից, իսկ **«Օազիս կոմպյուտեր» ՍՊԸ**-ի կողմից շտկված հավելված 3.1 հաստատված չէր էլեկտրոնային ստորագրությամբ: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ երեք աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

21.10.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Սահմանված ժամկետում **«Օազիս կոմպյուտեր» ՍՊԸ**-ի կողմից ներկայացվեց անհամապատասխանությունների շտկումը, որը ընդունվեց գնահատող հանձնաժողովի կողմից

1.2 21.10.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ 1, 2, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 20, 32, 33, 34, 35, 36 և 37-րդ չափաբաժիններում **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**-ն, 3, 29, 60, 61 և 62-րդ չափաբաժիններում **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**–ն, 30 և 31-րդ չափաբաժիններում **«Օազիս կոմպյուտեր» ՍՊԸ**–ն, 23, 25, 38, 59, 63, 64, 65, 68, 90, 91, 94, 95, 97, 98 և 100-րդ չափաբաժիններում **«Մեգա Էներգո» ՍՊԸ**–ն, 16, 17, 21 և 22-րդ չափաբաժիններում **«Կոմպասս» ՍՊԸ**–ն, 18 և 19-րդ չափաբաժիններում **«ԻՆՏ. Մենտաս Գրուպ» ՍՊԸ**–ն, 11, 13, 14, 15 և 26-րդ չափաբաժիններում **«Կոմպմարկետ» ՍՊԸ** –ն, 83, 84, 85 և 86-րդ չափաբաժիններում **«Հաշ Էմ Սերվիս» ՍՊԸ**-ն, 12-րդ չափաբաժնում **«Այ Թի Թրեյնինգ» ՍՊԸ**–ն և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Թ. Ջամղարայան
Գնահատող	Ռ. Զադոյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան